ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 22.04.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2022/48

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ «Ջրառ» ՓԲԸ
Բողոք բերող՝ «Էլեկտրասեվկավմոնտաժ ԷՍՄԿՁ» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Ջրառ» ՓԲԸ ներկայացուցիչներ՝ Հ. Բաղդասարյանի, Ն. Ռաթևոսյանի
«Էլեկտրասեվկավմոնտաժ ԷՍՄԿՁ» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ՝ Ա. Պետրոսյանի, Մ. Մինասյանի, Ա. Հակոբյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀՏԿԵՆՋԿ-Ջ-ԳՀԱՇՁԲ-22/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, տրանսֆորմատորների բաժանիչների վերանորոգման և կրակող ապահովիչների տեղադրման աշխատանքների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), քննության առնելով «Էլեկտրասեվկավմոնտաժ ԷՍՄԿՁ» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից 01.04.2022թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ բողոք) և կից փաստաթղթերը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի նախապատմությունը.

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է պարտավորեցնել «ՀՀՏԿԵՆՋԿ-Ջ-ԳՀԱՇՁԲ-22/20» ծածկագրով գնանշման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշում:

Բողոքներ քննող անձին «Էլեկտրասեվկավմոնտաժ ԷՍՄԿՁ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը մակագրվել է 01.04.2022թ.-ին:

Հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարի 01.04.2022թ.-ի թիվ 148-Ա Բողոքներ քննող անձ՝ Գ. Ներսիսյանին 2022-2023թ.-երի աշխատանքային տարվա ամենամյա արձակուրդ տրամադրելու մասին հրամանը, բողոքի քննությունը 05.04.2022թ.-ին փոխանցվել է Բողոքներ քննող անձ Լ. Օհանյանին:

07.04.2022թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ ներկայացված բողոքը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2022/48 համարի ծածկագիրը:

14.04.2022թ.-ին և 22.04.2022թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 14.04.2022թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 22.04.2022թ.-ին:

2. «Էլեկտրասեվկավմոնտաժ ԷՍՄԿՁ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Էլեկտրասեվկավմոնտաժ ԷՍՄԿՁ» ՍՊԸ-ն 01.04.2022թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«ՀՀՏԿԵՆՋԿ-Ջ-ԳՀԱՇՁԲ-22/20 գնանշման ծածկագրով ընթացակարգի հրավերում, որը հրապարակվել է 28.03.2022թ., առկա է հետևյալ պայմանագրի կատարման ժամկետը.

- Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած մինչև 15.04.2022թ.:

Տվյալ պայմանագրի կատարման ժամկետը հակասում է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման դրույթներին:

3. ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 21-րդ կետի 1-րդ ենթակետի ,,ը„ մաս՝

ը. կնքվելիք պայմանագրով ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման կամ ծառայության մատուցման ժամկետը, իսկ փուլային ձևով պայմանագրի կատարման դեպքում՝ առաջին փուլի ժամկետը, որը չպետք է պակաս լինի 20 օրացուցային օրից: Ընդ որում, սույն պարբերությամբ սահմանված ժամկետի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է պայմանագիրը կատարել ավելի կարճ ժամկետում: Սույն պարբերությունը չի կիրառվում փորձաքննություն անցած նախագծային փաստաթղթերով իրականացվող շինարարական աշխատանքների կամ մեկ անձից գնման ձևի կիրառման դեպքերում:»:

Ելնելով վերոգրյալից՝ Ընկերությունը Բողոքներ քննող անձին խնդրել է պարտավորեցնել «ՀՀՏԿԵՆՋԿ-Ջ-ԳՀԱՇՁԲ-22/20» ծածկագրով գնանշման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշում:

3. <u>«Ջրառ» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 04.04.2022թ.-ին թիվ /ԲՔԱ-ԳՆ/2/5812-2022 գրությամբ դիմել է «Ջրառ» ՓԲԸ-ին (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Էլեկտրասեվկավմոնտաժ ԷՍՄԿՁ» ՍՊԸ-ի կողմից 01.04.2022թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

Պատվիրատուն, 06.04.2022թ.-ի թիվ 331 և 332 գրություններով ներկայացնելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված փաստաթղթերը, հայտնել է հետևյալը.

«Նախ նշեմ, որ «Ջրառ» Ընկերության գործունեության նպատակն է տնտեսական գործառնություն իրականացնելու միջոցով շահույթի ստացումը: Գործունեության հիմնական տեսակը ջրային օբյեկտներից ջրառի իրականացմամբ, պայմանագրային հիմունքներով ջրօգտագործողներին և ջուրը սպառողներին ոռոգման ջրի մատակարարումն է:

Իր հիմնական նպատակների և խնդիրների իրականացման համար Ընկերությունը կազմակերպում և իրականացնում է հետևյալ գործառույթները.

Ջրային համակարգերի համալիր կազմի մեջ մտնող ջրատնտեսական օբյեկտերի (ջրառի գլխամասային կառուցվածքներ, ջրամբարներ, մակերևույթային ջրաղբյուրներից ջրառ իրականացող պոմպակայաններ, կապտաժային կառուցվածքներ, կոլեկտորներ, ջրային ռեսուրսների օգտագործմանն առնչվող հիդրոտեխնիկական կառուցվածքներ (այսուհետ՝ ՀՏԿ), թունելները, ջրհորները, ջրատար խողովակները, մաքրման կայանները, ջրընդունիչները, ջրհեռները, ջրատարները և այլն) պահպանումն ու շահագործումը:

Փաստական հանգամանքներ

• ՀՀՏԿԵՆՋԿ-Զ-ԳՀԱՇՁԲ-22/20 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով մրցույթը հրապարակվել է 28.03.2022 թվականին:

• Մրցույթին մասնակցել ցանկացող յուրաքանչյուր անձի 28.03.2022 թվականից մինչև 30.03.2022 թվականը տրվել է պարզաբանումներ պահանջելու ժամկետ:

• Մրցույթով կատարվող աշխատանքների բնութագիրը հետևյալն է՝

Հ/հ	Գնման առարկայի	
	Անվանումը	Տեխնիկական բնութագիրը
1	Ազատի I և II աստ. պ/կ-ների տրանսֆորմատորային ենթակայաններում ՏՄ 100,1600,2500 կվա տրանսֆորմատորների բաժանիչների վերանորոգման և կրակող ապահովիչների տեղադրման աշխատանքներ	1. 35 կվ լարման մեկուսիչների ապամոնտաժում (3-4մ բարձրության վրա) - 15 հատ 2. Կրակող ապահովիչների տեղադրում (3-4մ բարձրության վրա) և ալյումինե ձողերով միացում գործող ցանցին – 15 հատ 3. Օպերատիվ շղթաների բաժանիչների վերանորոգում և փորձարկում – 5 կոմպլ. 4. Նոր տողադրված կրակող ապահովիչների մեկուսացման դիմադրության չափում մեգոմետրով – 15 գիծ 5. Հողանցման պաշտպանության ստուգում – 2 կոմպլ.

• 30.03.2022 թվականին «Էլեկտրասեվկավմոնտաժ ԷՍԱԿՁ» ՍՊԸ-ի կողմից էլեկտրոնային հաղորդագրություն է ստացվել այն մասին, որ մրցույթին մասնակցելու համար ցանկանում են ծանոթանալ կատարվելիք աշխատանքների տարածքներին, ինչը Ընկերության կողմից թույլատրվել է:

• Հայտը բացվել է www.armeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով 2022 թվականի ապրիլի 04-ին, ժամը 15:00-ին:

Հիմքեր և հիմնավորումներ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն խորհրդի որոշմամբ կասեցումը կարող է հանվել, եթե պատվիրատուի ներկայացրած հիմնավորումների համաձայն, հանրային կամ պաշտպանության և ազգային անվտանգության շահերից ելնելով, անհրաժեշտ է շարունակել գնման գործընթացը: Սույն մասով նախատեսված որոշումը խորհուրդը հրապարակում է տեղեկագրում՝ այն կայացնելու օրվանից հաշված մեկ աշխատանքային օրվա ընթացքում:

Վերոնշյալի հիմքով Ձեզ եմ ներկայացնում մեր առարկությունները որպես ՀՀՏԿԵՆՋԿ-Ջ-ԳՀԱՇՁԲ- 22/20 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով մրցույթի կասեցումը հանելու, մրցույթը չչեղարկելու հիմք:

01.04.2022 թվականին «Էլեկտրասեվկավմոնտաժ ԷՍՄԿՁ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է բողոք՝ հիմքում դնելով այն հանգամանքը, որ «Ջրառ» ՓԲԸ-ի կողմից խախտվել է ՀՀ Կառավարության 04.05.2017 թվականի N526-Լ որոշման 1-ին կետով հաստատված կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի «ը» մասը՝ այն է կնքվելիք պայմանագրով ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման կամ ծառայության մատուցման ժամկետը, իսկ փուլային ձևով պայմանագրի կատարման դեպքում առաջին լիուլի ժամկետը, որը չպետք է պակաս լինի 20 օրացուցային օրից: Ընդ որում, սույն պարբերությամբ սահմանված ժամկետի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից՝ բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է պայմանագիրը կատարել ավելի կարճ ժամկետում: Սույն պարբերությունը չի կիրառվում փորձաքննություն անցած նախագծային փաստաթղթերով իրականացվող շինարարական աշխատանքների կամ մեկ անձից գնման ձևի կիրառման դեպքերում, մինչդեռ ՀՀՏԿԵՆՋԿ-Ջ-ԳՀԱՇՁԲ-22/20 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով մրցույթում որպես պայմանագրի ժամկետ նշվել է 15.04.2022 թվական:

Հարկ է նշել, որ մրցույթը հայտարարվել է 28.03.2022 թվականին և այդ օրվանից սկսած մինչև 30.03.2022 թվականը բողոք ներկայացրած անձը հնարավորություն ուներ պայմանագրի ժամկետի վերաբերյալ պարզաբանում պահանջելու պայմանագրի և կարգով նշված ժամկետների տարբերության վերաբերյալ, ինչը չի արել:

Վերոնշյալը թույլ է տալիս ենթադրելու, որ բողոք ներկայացրած անձը դրսևորել է կանխակալ վերաբերմունք՝ ցանկանալով բողոքարկման միջոցով «Ջրառ» փակ բաժնետիրական ընկերությանը պարտավորեցնել ընդունել գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշում, ինչի պարագայում խաթարվելու է 2022

թվականի համար Ջրօգտագործողների Ընկերությունների կողմից ներկայացված ոռոգման ջրի մատակարարման պլան-ժամանակացույցերի հիմքով ձևավորված ջրամատակարարումը, ինչը և նշանակում է, որ «Ձրառ» ՓԲԸ-ի կողմից հայտարարված մրցույթը չի կարող կասեցվել կամ չեղյալ համարվել գնման գործընթացի հետ կապված բողոքի առկայությամբ, քանի որ այն իր մեջ պարունակում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված հանրային գերակա շահ: Մրցույթով կատարվելիք աշխատանքները անհրաժեշտ է կատարել սեղմ ժամկետներում, քանի որ ապրիլ ամսվա 2-րդ տասնօրյակից՝ ըստ «Երևան» և «Արտաշատ» ՋՕԸ-երի կողմից 2022 յ&վականի համար ներկայացված Պլան-ժամանակացույցերի անհրաժեշտ է ոռոգման ջուր մատակարարել՝ գյուղատնտեսական աշխատանքները անխափան իրականացնելու համար, իսկ ջուր չմատակարարելը այս շրջանում կհագեցնի գյուղատնտեսության՝ ապա նաև տնտեսության լրջագույն խնդիրների:

Ինչ վերաբերվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 4-րդ մասով բողոքի վերաբերյալ նման պահանջ ստանալու օրվանից հաշված երկու աշխատանքային օրվա ընթացքում Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը տրամադրելուն, ապա հարկ եմ համարում նշել, որ Ձեր կողմից ԲՔԱ-ԳՆ/2/5812 ելքագրմամբ 04.04.2022 թվականի գրությունը ուղարկվել է Ընկերության sevan hr.axo@mail.ru հասցեին 04.04.2022 թվականին երեկոյան ժամը 22:23 րոպեին իսկ https://gnumner.am/hy կայթում՝ 04.04.2022 թվակաին, երեկոյան ժամը 19:25 րոպեին՝ աշխատանքային օրվա ավարտից հետո, որը Ընկերությունը ստացել է 05.04.2022 թվականին:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածի 2-րդ կետը խնդրում եմ ՀՀՏԿԵՆՋԿ-Ջ-ԳՀԱՇՁԲ-22/20 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով մրցույթի կասեցումը հանել և «Էլեկտրասեվկավմոնտաժ ԷՍՄԿՁ» ՍՊԸ-ի կողմից 01.04.2022 թվականին ներկայացված բողոքը մերժել:

Հիմք ընդունելով «Էլեկտրասեվկավմոնտաժ ԷՍՄԿՁ» ՍՊԸ-ի կողմից 01.04.2022 թվականին ներկայացված բողոքը և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 4-րդ մասով Ձեզ եմ ներկայացնում ՀՀ ՏԿԵՆ «Ջրառ» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) կարիքների համար ՀՀՏԿԵՆՋԿ-Ջ-ԳՀԱՇՁԲ-22/20 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով տրանսֆորմերների բաժանիչների վերանորոգման և կրակող ապահովիչների տեղադրման աշխատանքների ձեռքբերման մրցույթին վերաբերվող անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը:»:

4. **<u>ԳԲՔԱ-ԼՕ-2022/48 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>.**

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Ջրառ» ՓԲԸ կողմից տրանսֆորմատորների բաժանիչների վերանորոգման և կրակող ապահովիչների տեղադրման աշխատանքների ձեռքբերման նպատակով 28.03.2022թ.-ին հայտարարվել է «ՀՀՏԿԵՆՋԿ-Ջ-ԳՀԱՇՁԲ-22/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգի հայտերի ներկայացման և հայտերի բացման վերջնաժամկետ է սահմանվել 04.04.2022թ.-ի ժամը 15:00 ներառյալ:

iii. Ընթացակարգի հրավերի հավելված 6-ով՝ պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագրի հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցով (այսուհետ նաև՝ Հավելված 1) բացի այլ պայմաններից սահմանվել է նաև, որ նախատեսված աշխատանքները պետք է իրականացվեն պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած մինչև 15.04.2022թ.-ը:

5. **<u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.**

Բողոքներ քննող անձը, լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ «Էլեկտրասեվկավմոնտաժ ԷՍՄԿԶ» ՍՊԸ-ի կողմից 01.04.2022թ.-ին ներկայացված բողոքը հիմնավոր է և ենթակա բավարարման ամբողջությամբ՝ հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ հոդվածների վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Զարգացնելով վերոգրյալները՝ Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ գնման առարկան համարժեք հատուցմամբ ձեռք բերելու նպատակը կլիներ ձևական, եթե դրան

հասնելուն ուղղված ընթացակարգերի կազմակերպումը չլիներ տնտեսող, արդյունավետ և օգտավետ:

Այն է՝ ընթացակարգերի կազմակերպումը պետք է լինի՝

1. տնտեսող, այսինքն՝ նախատեսված արդյունքին կամ նպատակին հասնելու համար նախատեսված ռեսուրսների, ֆինանսական միջոցների մինիմալացմամբ՝ պահպանելով նախապես սահմանված որակը.

2. արդյունավետ, այսինքն՝ արդյունքի կամ նպատակի մասով պլանավորված և փաստացի վիճակների համեմատությունը: Նախատեսված արդյունքին կամ նպատակին հասնելու համար օգտագործված նյութական և ոչ նյութական միջոցների համարժեքությունը ձեռք բերված արդյունքին, երբ ապահովվում է կատարված ծախսի և Պատվիրատուի համար դրա օգտակարության միջև պատշաճ հարաբերակցությունը.

3. օգտավետ՝ գնման առարկան համարժեք հատուցմամբ ձեռք բերելու նպատակով դրան հասնելուն ուղղված ընթացակարգերի արդյունքի կամ նպատակի առավելագույն մակարդակի ապահովում:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել նաև, որ իրավունքի սկզբունքները հիմնարար գաղափարներ են, որոնք արտահայտում են հասարակական կյանքի օբյեկտիվ օրինաչափությունները, ուղղակի կամ անուղղակի ամրագրվում են իրավական նորմերում, իրավական համակարգի հենասյունն են, կոչված են կարգավորելու հասարակական հարաբերությունները, ունեն համապարտադիրության հատկանիշ:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 21-րդ կետի 1-ին ենթակետի «ը» պարբերության համաձայն՝ եթե գնման գործընթացների կազմակերպման ժամանակացույցով այլ ժամկետ նախատեսված չէ, ապա գնման պահանջի ծագման օրվան հաջորդող քսան աշխատանքային օրվա ընթացքում պատասխանատու ստորաբաժանումը՝ կազմում և հաստատում է գնման հայտը, որը ներառում է կնքվելիք պայմանագրով ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման կամ ծառայության մատուցման ժամկետը, իսկ փուլային ձևով պայմանագրի կատարման դեպքում՝ առաջին փուլի ժամկետը, որը չպետք է պակաս լինի 20 օրացուցային օրից: Ընդ որում, սույն պարբերությամբ սահմանված ժամկետի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից՝ բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է պայմանագիրը կատարել ավելի կարճ ժամկետում: Սույն պարբերությունը

չի կիրառվում փորձաքննություն անցած նախագծային փաստաթղթերով իրականացվող շինարարական աշխատանքների կամ մեկ անձից գնման ձևի կիրառման դեպքերում:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Ընթացակարգի հրավերի թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված ցանկացած պահանջ պետք է ապահովի մրցակցության հավասար պայմաններ հնարավոր մասնակիցների համար, օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինի այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը:

Բողոքներ քննող անձը փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Ջրառ» ՓԲԸ կողմից տրանսֆորմատորների բաժանիչների վերանորոգման և կրակող ապահովիչների տեղադրման աշխատանքների ձեռքբերման նպատակով 28.03.2022թ.-ին հայտարարված «ՀՀՏԿԵՆՋԿ-Ջ-ԳՀԱՇՁԲ-22/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի ներկայացման և հայտերի բացման վերջնաժամկետ է սահմանվել 04.04.2022թ.-ի ժամը 15:00 ներառյալ: Նույն ընթացակարգի հրավերի Հավելված 1-ով բացի այլ պայմաններից սահմանվել է նաև, որ նախատեսված աշխատանքները պետք է իրականացվեն պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած մինչև 15.04.2022թ.-ը:

Օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ ենթակետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին բողոքը ներկայացվում է գրավոր, ստորագրված, դրանում ներառելով՝ … բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները:

Վկայակոչված հոդվածի վերլուծությունից հետևում է, որ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը բողոքի քննությունը հարուցում և իրականացնում է միմիայն ներկայացված բողոքի հիման վրա և ենթակա է քննության միայն դրա սահմաններում: Ընդ որում, բողոք ներկայացնելով՝ շահագրգիռ անձն ինքնուրույն է որոշում իր բողոքի պահանջի շրջանակը, ինչը տնօրինչականության սկզբունքի դրսևորման արդյունք է, որն անձի՝ ՀՀ Սահմանադրությամբ և օրենքով նրան տրված հնարավորությունն է սեփական հայեցողությամբ տնօրինելու իր նյութական և դատավարական (ընթացակարգային) իրավունքները և դրանց պաշտպանության եղանակները:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում արձանագրել, որ բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները ներկայացնելու պարտականությունը դրված լինելով բողոքաբերի վրա, վերջինս է հանդիսանում շահագրգիռ այն անձը, ով, ինքնուրույն որոշելով իր բողոքի պահանջի շրջանակը, պետք է բողոքի հետ միաժամանակ ներկայացնի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները՝ որպես բողոքի բավարարմանն ուղղված էական նշանակություն ունեցող հիմքեր ու հիմնավորումներ: Ընդ որում, օրենսդիրը չի սահմանափակում բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները ներկայացնել միայն բողոքի հետ միաժամանակ, այլև բողոքաբերը կարող է ու զրկված չէ լրացնելու/փոփոխելու/նվազեցնելու բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները գործի քննության ընթացքում:

Զարգացնելով վերոգրյալ իրավական դիրքորոշումը՝ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել նաև, որ փաստացի և իրավական հիմքեր, ապացույցներ ներկայացնելու պարտականությունը կրում է նաև բողոքի քննությանը ներգրավված յուրաքանչյուր անձ և վերջինիս իր առարկությունների հիմքում ընկած փաստական հանգամանքները, որոնք ուղղված են բողոքով վկայակոչված փաստերի հերքմանը, պետք է նույնպես պարունակեն, ըստ էության, Օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ ենթակետով սահմանված դրույթներով նախատեսված փաստացի և իրավական հիմքեր, ապացույցներ:

Վերոգրյալ իրավական կարգավորումների և վերլուծությունների արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ բոլոր այն դեպքերում, երբ բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է գնման առարկայի բնութագրերը, նախաորակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները, մասնավորապես՝ երբ բողոքի վեճի առարկան հանդիսանում է հրավերում առկա որևէ պայմանի՝ գնումների օրենսդրությանը հակասելու հանգամանքը, ապա այդ՝ բողոքով վկայակոչված փաստական հանգամանքի ժխտման ապացուցման բեռը պետք է կրի պատվիրատուն, քանի որ Կարգի

22-րդ կետի իմաստով գնման առարկայի բնութագրերը սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ և արտադրողներ: Ուստի, նման դեպքերում, բողոքի քննության ընթացակարգին մասնակցող պատվիրատուն է պարտավոր ապացուցել իր՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի պահանջների և բողոքի առարկությունների հիմքում դրված ու գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերն ու գնումների մասին ՀՀ օրենսդրությանը համապատասխանելու հանգամանքը:

Վերոնշյալ իրավական նորմերի ու փաստական հանգամանքների հիման վրա, դրանք համադրելով Պատվիրատուի և Ընկերության կողմից ներկայացված բողոքի իրավական ու փաստական հանգամանքներին, ինչպես նաև ուսումնասիրելով Ընթացակարգի հրավերի սահմանված պայմանները՝ Բողոքներ քննող ր քննող անձը փաստում է, որ Հանձնաժողովը, «ՀՀՏԿԵՆՋԿ-Ջ-ԳՀԱՇՁԲ-22/20» գնանշման հարցման ընթացակարգը հրավերի Հավելված 1-ով սահմանելով պայման այն մասին, որ նախատեսված աշխատանքները պետք է իրականացվեն պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած մինչև 15.04.2022թ.-ը, գործել է ոչ իրավաչափ, քանի որ Կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի «ը» պարբերության համաձայն կնքվելիք պայմանագրով աշխատանքի կատարման ժամկետը չպետք է պակաս լինի 20 օրացուցային օրից, ինչը տվյալ դեպքում չի պահպանվել Պատվիրատուի կողմից:

Նման պարագայում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ խախտվում է Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերը՝ գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպումը, պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնումը և նրանց միջև մրցակցության խրախուսումը, և Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները՝ ցանկացած անձի՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը: Այն դեպքում, երբ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք

հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Էլեկտրասեվկավմոնտաժ ԷՍՄԿՁ» ՍՊԸ-ի կողմից 01.04.2022թ.-ին ներկայացված բողոքով բերված փաստերն ու հանգամանքները՝ հիմնավոր են, իսկ գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը «ՀՀՏԿԵՆՋԿ-Ջ-ԳՀԱՇՁԲ-22/20» գնանշման հարցման ընթացակարգի հրավերի Հավելված 1-ով սահմանելով պայման այն մասին, որ նախատեսված աշխատանքները պետք է իրականացվեն պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած մինչև 15.04.2022թ.-ը, գործել է ոչ իրավաչափ, խախտելով Կարգի Կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի «ը» պարբերությամբ սահմանված պահանջները, որի արդյունքում խախտվել են Օրենքի 3-րդ և 7-րդ հոդվածներով սահմանված գնման գործընթացին ցանկացած անձի մասնակցելու հավասար իրավունք: Ուստի նման պայմաններում՝ «Ջրառ» ՓԲԸ կողմից հայտարարված «ՀՀՏԿԵՆՋԿ-Ջ-ԳՀԱՇՁԲ-22/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգն ենթակա է չկայացած հայտարարման:

Ուստի, վերը բերված եզրահանգումների ու դատողությունների հիման վրա՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ «Էլեկտրասեվկավմոնտաժ ԷՍՄԿՁ» ՍՊԸ-ի կողմից 01.04.2022թ.-ին ներկայացված բողոքը պետք է բավարարել:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

«Էլեկտրասեվկավմոնտաժ ԷՍՄԿՁ» ՍՊԸ-ի կողմից 01.04.2022թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2022/48 ծածկագրով բողոքը բավարարել ամբողջությամբ:

Պարտավորեցնել «ՀՀՏԿԵՆՋԿ-Ջ-ԳՀԱՇՁԲ-22/20» ծածկագրով գնանշման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**